



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

1959 · 50 · 2009

ԵՐՐՈՐԴԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲԱՅԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 23459/03)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

27 հոկտեմբերի 2009թ.

Հանձնվել է Մեծ պալատի քննարկմանը

10/05/2010

Սույն վճիռը վերջնական է դառնալու Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝
 Josep Casadevall, Նախագահ,
 Elisabet Fura,
 Corneliu Bîrsan,
 Boštjan Bostjan M. Zupančič,
 Alvina Gyulumyan,
 Egbert Myjer,
 Ann Power, դատավորներ,
 և Stanley Naismith, Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,
 2009 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած դռնփակ նիստում,
 կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2003 թվականի հուլիսի 22-ին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վահան Բայաթյանի կողմից («դիմումատու») ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված գանգատի (թիվ 23459/03) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Կանադայում՝ Ջորջթաունում, գործող փաստաբան պրն. J. M. Burns-ը, ԱՄՆ-ում՝ Փաթերսոնում, գործող փաստաբան պրն. A. Carbonneau և Երևանում գործող փաստաբան պրն. Ռ. Խաչատրյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդում էր, որ բանակում ծառայելուց հրաժարվելու համար նրան դատապարտելու միջոցով ապօրինաբար սահմանափակվել է իր մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:

4. 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Պալատը գանգատն ընդունելի է համարել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի մասով և անընդունելի՝ մյուս հոդվածների մասով: Գործում 9-րդ հոդվածի կիրառելիության հարցի քննությունը միացվել էր գործի՝ ըստ էության քննությանը:

5., Կողմերի հետ խորհրդակցելուց հետո Պալատը, որոշելով, որ գործն ըստ էության քննելու անհրաժեշտություն չկա (*ամփոփելով*՝ 59-րդ կանոնի 3-րդ մաս), կողմերից պահանջել է ներկայացնել լրացուցիչ գրավոր դիրքորոշումներ (59-րդ կանոնի 1-ին մաս):

6. 2007 թվականի փետրվարի 14-ին դիմումատուն և Կառավարությունը ներկայացրել են իրենց լրացուցիչ գրավոր դիրքորոշումներ: 2007 թվականի մարտի 20-ին դիմումատուն գրավոր պատասխանել է Կառավարության դիրքորոշման:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

7. Դիմումատուն ծնվել է 1983 թվականին և ապրում է Երևանում:

Ա. Գործի նախապատմությունը

8. Դիմումատուն Եհովայի վկա է: 1997 թվականից ի վեր նա մասնակցել է Եհովայի վկաների՝ բազմաթիվ կրոնական ծիսակատարությունների և 1999 թվականի սեպտեմբերի 18-ին մկրտվել է 16 տարեկան հասակում:

9. 2000 թվականի հունվարի 16-ին դիմումատուն հաշվառվել է Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատում 10. 2001 թվականի հունվարի 16-ին դիմումատուն 17 տարեկան հասակում ենթարկվել է բժշկական քննության, որի արդյունքներով նա ճանաչվել է զինվորական ծառայության համար պիտանի: Դիմումատուն զինվորական ծառայության զորակոչվել է 2001 թվականի գարնանը (ապրիլից հունիս):

11. 2001 թվականի ապրիլի 1-ին՝ զորակոչի ժամանակաշրջանի սկզբում, դիմումատուն հետևյալ բովանդակությամբ նամակներ ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինկոմիսարին և ՀՀ ազգային ժողովին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողով:

«Ես՝ Վահան Բայթյանս՝ ծնված 1983 թվականին, հայտնում եմ Ձեզ, որ 1996 թվականից ուսումնասիրել եմ Աստվածաշունչը և Աստվածաշնչով կրթել իմ խիղճը Եսայու 2:4-ում գրված խոսքերին համահունչ, և խղճի հիմքով հրաժարվում եմ զինվորական ծառայություն կատարելուց: Միևնույն ժամանակ հայտնում եմ Ձեզ, որ պատրաստ եմ կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն՝ զինվորական ծառայության փոխարեն»:

12. Մայիսի սկզբին դիմումատուի տան հասցեով ուղարկվել է ծանուցագիր՝ 2001 թվականի մայիսի 15-ին ներկայանալ զինվորական ծառայության: 2001 թվականի մայիսի 14-ին Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատի աշխատակիցը զանգահարել է դիմումատուի տուն և հարցրել նրա մորը, թե արդյոք դիմումատուն տեղյակ է, որ հաջորդ օրը նրան կանչել են Ջինկոմիսարիատ՝ զինվորական ծառայության զորակոչվելու համար: Նույն օրը երեկոյան դիմումատուն ժամանակավորապես հեռացել է իր տնից՝ վախենալով, որ նրան ստիպողաբար կտանեն ծառայության վայր:

13. 2001 թվականի մայիսի 15-ին և 16-ին Ջինկոմիսարիատի աշխատակիցները զանգահարել են դիմումատուի մորը՝ պահանջելով հայտնել տեղեկություններ դիմումատուի գտնվելու վայրի մասին: Նրանք սպառնացել են նրան ուժով տանել ծառայության վայր, եթե նա կամովին չներկայանա: 2001 թվականի մայիսի 17-ի վաղ առավոտյան Կոմիսարիատի աշխատակիցները եկել են դիմումատուի տուն: Նրա ծնողները քնած էին և դուռը չեն բացել: Այդ նույն օրը դիմումատուի մայրը գնացել է Ջինկոմիսարիատ, որտեղ հայտնել է, որ դիմումատուն հեռացել է տնից, և որ ինքը տեղյակ չէ, թե երբ նա կվերադառնա: Դիմումատուն նշում է, որ Ջինկոմիսարիատի կողմից հետագա քայլեր չեն ձեռնարկվել իր ընտանիքի հետ կապ հաստատելու համար:

14. 2001 թվականի մայիսի 29-ին ՀՀ ազգային ժողովի պետական-իրավական հարցերի հանձնաժողովը պատասխանել է 2001 թվականի ապրիլի 1-ին դիմումատուի նամակին՝ նշելով, որ.

«Ձեր հայտարարության կապակցությամբ ... հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ծառայել հայկական բանակում: Քանի որ Հայաստանում դեռևս չի ընդունվել այլընտրանքային զինվորական ծառայության մասին որևէ օրենք, դուք պետք է ենթարկվեք գործող օրենքին և ծառայեք հայկական բանակում»:

15. 2001 թվականի հունիսի սկզբից մինչև հունիսի կեսն ընկած ժամանակահատվածում դիմումատուն վերադարձել է տուն, որտեղ ապրել է մինչև իր ձերբակալումը 2002 թվականի սեպտեմբերին:

16. 2001 թվականի հունիսի 12-ին Ազգային ժողովն ընդհանուր համաներում էր հայտարարել, որը վերաբերում էր միայն այն անձանց, որոնք հանցագործություն էին գործել մինչև 2001 թվականի հունիսի 11-ը, և որը ենթակա էր կիրառման մինչև 2001 թվականի սեպտեմբերի 13-ը:

Բ. Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը

17. 2001 թվականի հունիսի 26-ին Էրեբունի համայնքի զինկոմիսարը Էրեբունի համայնքի դատախազին ուղարկել է գրություն այն մասին, որ 2001 թվականի մայիսի 15-ին դիմումատուն չի ներկայացել զինվորական կոմիսարիատ ծառայության վայր մեկնելու համար, և որ նա միտումնավոր խուսափում է զինվորական ծառայությունից:

18. 2001 թվականի հուլիս ամսվա ընթացքում և օգոստոսի 1-ին դիմումատուն հոր և պաշտպանի հետ մի քանի անգամ ներկայացել է համայնքի դատախազություն՝ համապատասխան քննիչից իր դրությունը պարզաբանելու և առաջիկա դատաքննության հետ կապված հարցերը քննարկելու:

19. 2001 թվականի օգոստոսի 1-ին քննիչը քրեական գործ է հարուցել դիմումատուի դեմ ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու փաստի առթիվ: Ըստ դիմումատուի՝ վերադաս դատախազը հրաժարվել է նրա դեմ մեղադրանք առաջադրելուց մինչև հետագա քննության իրականացումը: 2001 թվականի օգոստոսի 8-ին դիմումատուն, որը, թերևս, ցանկանում էր օգտվել վերոնշյալ համաներումից, բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն: Նա այս բողոքին ոչ մի պատասխան չի ստացել:

20. 2001 թվականի հոկտեմբերի 1-ին քննիչը դիմումատուի վերաբերյալ կայացրել է հինգ որոշում. (1) դիմումատուի նկատմամբ ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով մեղադրանք առաջադրել, (2) դիմել դատարան դիմումատուին կալանավորելու թույլտվություն ստանալու համար, (3) դիմումատուին համարել փախուստի դիմած անձ և նրան հետախուզել, (4) դիմել դատարան՝ դիմումատուի նամակագրությունը վերահսկելու թույլտվություն ստանալու համար, և (5) կասեցնել վարույթը մինչև դիմումատուին հայտնաբերելը: Համաձայն այս վերջին որոշման՝

«...քանի որ, ձեռնարկելով քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, հետախուզվող անձին [դիմումատուին] գտնելու փորձերն անհաջող են եղել երկու ամսվա ընթացքում, և նրա գտնվելու վայրը հայտնի չէ, ... [անհրաժեշտ է] կասեցնել գործի քննությունը ... և ... ակտիվացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները մեղադրյալին գտնելու համար»:

21. Ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա ընտանիքի անդամները չեն տեղեկացվել այս որոշումների մասին՝ չնայած այն հանգամանքի, որ 2001 թվականի հունիսի կեսից դիմումատուն բնակվել է իր տանը, իսկ 2001 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին մի քանի անգամ հանդիպել է քննիչի հետ:

22. 2001 թվականի հոկտեմբերի 2-ին Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը թույլատրել է վերահսկել դիմումատուի նամակագրությունը և որոշում է կայացրել նրան կալանավորելու մասին: Ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա ընտանիքի անդամները չեն տեղեկացվել այս որոշումների մասին, իսկ հետաքննության մարմինը որևէ փորձ չի կատարել նրանց հետ կապ հաստատելու համար մինչև նրա ձերբակալումը 2002 թվականի սեպտեմբերին:

23. 2002 թվականի ապրիլի 26-ին Կոնվենցիան ուժի մեջ է մտել Հայաստանի համար:

Գ. Դիմումատուի ձերբակալումը և դատաքննությունը

24. 2002 թվականի սեպտեմբերի 4-ին, մինչ դիմումատուն գտնվում էր աշխատանքի վայրում, ոստիկանության երկու աշխատակիցներ այցելել են նրա տուն և տեղեկացրել ծնողներին, որ նրանց տղան հետախուզվում է ու հարցրել են վերջինիս գտնվելու վայրի մասին:

25. 2002 թվականի սեպտեմբերի 5-ին ոստիկանության աշխատակիցները վերադարձել են և դիմումատուին ուղեկցել ոստիկանության համապատասխան բաժին, որտեղ կազմվել է արձանագրություն դիմումատուի՝ կամովին հանձնվելու մասին. որում նշվում է, որ դիմումատուն, պարզելով, որ գտնվում է հետախուզման մեջ, որոշել է ներկայանալ ոստիկանության բաժին: Նույն օրը դիմումատուին տեղափոխել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

26. 2002 թվականի սեպտեմբերի 9-ին հետաքննության մարմինը վերսկսել է դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով վարույթը:

27. 2002 թվականի սեպտեմբերի 11-ին դիմումատուին առաջին անգամ ներկայացվել է 2001 թվականի հոկտեմբերի 1-ին առաջադրված մեղադրանքը: Նույն օրը հարցաքննության ժամանակ դիմումատուն նշել է, որ նա իր կրոնական համոզմունքների պատճառով գիտակցաբար հրաժարվել է զինվորական ծառայությունից, բայց փոխարենը պատրաստ է կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

28. Նույն օրը դիմումատուին և նրա պաշտպանին տրվել է գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն: Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2002 թվականի սեպտեմբերի 18-ին և դատախազի կողմից հաստատվել 2002 թվականի սեպտեմբերի 23-ին:

29. 2002 թվականի հոկտեմբերի 22-ին Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում սկսվել է

դիմումատուի գործի դատաքննությունը: Դատական նիստը հետաձգվել էր մինչև 2002 թվականի հոկտեմբերի 28–ը, քանի որ դիմումատուին չէր տրամադրվել մեղադրական եզրակացության պատճենը:

30. 2002 թվականի հոկտեմբերի 28–ին կայացած դատական նիստի ընթացքում դիմումատուն կրկնել է այն հայտարարությունը, որը նշել էր հարցաքննության ժամանակ: Նույն օրը էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել և նրան դատապարտել է մեկ տարի և վեց ամիս ժամկետով ազատազրկման:

31. 2002 թվականի նոյեմբերի 29–ին դատախազը բողոքարկել է այդ դատավճիռը՝ պահանջելով նշանակել ավելի խիստ պատիժ: Վերաքննիչ բողոքում նշված էր հետևյալը.

«[Դիմումատուն] չի ընդունել իր մեղքն այն բացատրությամբ, որ նա հրաժարվել է [զինվորական] ծառայությունից Աստվածաշունչն ուսումնասիրելու արդյունքում, և, լինելով Եհովայի վկա, նրա հավատքը չի թույլատրում ծառայել Հայաստանի զինված ուժերում:

[Դիմումատուն] ֆիզիկապես առողջ է և չի աշխատում:

Կարծում եմ, որ դատարանն ակնհայտորեն մեղմ պատիժ է նշանակել և հաշվի չի առել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, [դիմումատուի] անձը, ինչպես նաև դիմումատուի՝ [զինվորական] ծառայությունից հրաժարվելու հստակորեն անհիմն և վտանգավոր պատճառները»:

32. 2002 թվականի դեկտեմբերի 19–ին դիմումատուի պաշտպանն ի պատասխան դատախազի վերաքննիչ բողոքի ներկայացրել է առարկություններ՝ պնդելով, որ կայացված դատավճիռը խախտում է դիմումատուի՝ Սահմանադրության 23–րդ հոդվածով, Կոնվենցիայի 9–րդ հոդվածով և այլ միջազգային փաստաթղթերով երաշխավորված խղճի և կրոնի ազատությունը: Նա նաև նշել է, որ այլընտրանքային քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքի բացակայությունը չի կարող համարվել անձին՝ խղճի հետ կապված պատճառներով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնավորում:

33. 2002 թվականի դեկտեմբերի 24–ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ դատախազը, *inter alia*, պնդել է, որ ավելի խիստ պատիժ պետք է նշանակվի նաև այն պատճառով, որ դիմումատուն թաքնվել է քննությունից: Դիմումատուն նշում է, որ վերաքննիչ բողոքի դատական քննության ընթացքում նրա նկատմամբ ճնշում է գործադրվել, որպեսզի նա հրաժարվի զինվորական ծառայությանն առնչվող իր կրոնական համոզմունքներից. ինչպես դատախազը, այնպես էլ դատավորներից մեկը նրան առաջարկել

են կարճել գործը, եթե նա հրաժարվի իր առարկություններից և կատարի իր զինվորական պարտքը:

34. Նույն օրը Վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել դատախազի վերաքննիչ բողոքը և խստացրել է պատիժը՝ դիմումատուին դատապարտելով երկուսուկես տարի ժամկետով ազատազրկման՝ նշելով, որ.

«Առաջին ատյանի դատարանը [դիմումատուի] նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել, որ [դիմումատուն] ծանր հանցագործություն չի կատարել, երիտասարդ է, նախկինում հանցանք չի գործել, խոստովանել է իր մեղքը, ակտիվորեն աջակցել է հանցագործությունը բացահայտելու գործում և անկեղծորեն զղջացել է:

Սակայն, վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ հաստատվել է, որ դիմումատուն ոչ միայն չի ընդունել իր մեղքը, այլև չի զղջացել իր կատարած հանցագործության համար, և ոչ միայն չի աջակցել հանցագործությունը բացահայտելու գործում, այլև թաքնվել է նախաքննությունից և նրա գտնվելու վայրը հայտնի չի եղել, ինչի հետևանքով նա գտնվել է հետախուզման մեջ:

Հիմնվելով այս հանգամանքների վրա, ինչպես նաև հաշվի առնելով հանցագործության բնույթը, դրդապատճառները և հանրության համար վտանգավորության աստիճանը, Վերաքննիչ դատարանը համարում է, որ դատախազի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել և [դիմումատուի] նկատմամբ նշանակել ավելի խիստ և համապատասխան պատիժ:»

35. Չպարզված օրը դիմումատուի պաշտպանը վճռաբեկ բողոք է բերել այս դատավճռի դեմ՝ ներկայացնելով փաստարկներ, որոնք նման էին 2002 թվականի դեկտեմբերի 19-ին իր առարկություններում նշված փաստարկներին: Նա կրկին շեշտել էր, որ դիմումատուն պատրաստակամ էր կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, և նշել էր, որ բանտում երկուսուկես տարի անցկացնելու փոխարեն դիմումատուն կարող էր կատարել հասարակության համար օգտակար աշխատանքներ: Նրա պնդմամբ նման հնարավորություն նախատեսված էր «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով: Ավելին, նա պնդում էր, որ այլընտրանքային ծառայության սկզբունքն ամրագրված էր «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում, իսկ դիմումատուն չէր կարող մեղադրվել կիրառման համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով:

36. 2003 թվականի հունվարի 24-ին ՀՀ վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի դատավճիռը, *inter alia*, նշելով, որ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները, դրա 44-րդ հոդվածի համաձայն, ենթակա էին սահմանափակումների, ինչպես օրինակ՝ պետական անվտանգության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության

նկատառումներով: Նման սահմանափակումներ նախատեսվում էին նաև Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով:

37. 2003 թվականի հուլիսի 22-ին դիմումատուն իր պատիժը տասն ու կես ամիս կրելուց հետո պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. 1995 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (մինչև 2005 թվականին ներմուծված փոփոխությունները)

38. Սահմանադրության համապատասխան դրույթները հետևյալն են.

Հոդված 23

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք»:

Հոդված 44

«Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Հոդված 47

«Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:

Բ. 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգիրք (ուժը կորցրել է 01.08.03 թվականին)

39. ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները հետևյալն են.

Հոդված 75. Իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելը

«Իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելը՝ պատժվում է ազատազրկմամբ մեկից մինչև երեք տարի ժամանակով»:

Գ. 1998 թվականի «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը

40. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթները հետևյալն են.

Հոդված 11. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը

«1. Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները և առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում»:

Հոդված 12. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելը

«1.. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝ ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից. բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է. գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ. դ) մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին. ե) գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ»:

Հոդված 16. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ հիմքերով տարկետում ստանալը

«2. Առանձին դեպքերում Կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաները և առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից»:

Դ. 1991 թվականի «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը

41. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթները հետևյալն են.

Հոդված 19

«Գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար»:

Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ»:

Ե. 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված և 2004 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը

42. Օրենքի համապատասխան դրույթները՝ 2004 թվականի նոյեմբերի 22-ի փոփոխություններով, հետևյալն են.

Հոդված 2. Այլընտրանքային ծառայության հասկացությունը և տեսակները

«1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝ ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն. բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

3. Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է և չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ»:

Հոդված 3. Այլընտրանքային ծառայության անցնելու հիմքը

«1. Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը»:

III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ա. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) թիվ 221 կարծիքը (2000 թվական). Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար Հայաստանի դիմումը

43. Համաձայն Կարծիքի համապատասխան հատվածի՝

«13. Խորհրդարանական վեհաժողովը հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի և Ազգային ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախագահների կողմից ուղարկված նամակները և նկատում է, որ Հայաստանը հանձն է առնում կատարել հետևյալ պարտավորությունները. ... iv. մարդու իրավունքներ՝ ... դ. անդամակցությունից հետո երեք տարվա ընթացքում եվրոպական չափանիշներին համապատասխան ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք և, մինչ այդ, ներում շնորհել խղճի հիմքով ծառայությունից հրաժարված բոլոր անձանց, որոնք դատապարտվել են ազատազրկման կամ պահվում են կարգապահական գումարտակներում՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարելու ոչ զինված զինվորական ծառայության կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջև, երբ այլընտրանքային ծառայության մասին օրենքն ուժի մեջ մտնի»:

Բ. ԵՍԽՎ–ի թիվ 1518 հանձնարարականը (2001 թվական). Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում զինվորական ծառայությունից խղճի հիմքով հրաժարվելու իրավունքի իրականացումը

44. Համաձայն Հանձնարարականի համապատասխան հատվածի՝

«2. Խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հիմնարար տարր է:

3. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասը սահմանադրություններում կամ օրենքներում ներմուծել է խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Այս իրավունքը ճանաչված չէ միայն հինգ անդամ պետությունում»:

Գ. Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիան (2000 թվական)

45. Խարտիայի համապատասխան դրույթները հետևյալն են.

Շոդված 10. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Սույն իրավունքը ներառում է կրոնը կամ հավատքը փոխելու ազատությունը և միայնակ կամ այլ անձանց հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով կրոնը կամ հավատքն արտահայտելու իրավունքը՝ դավանելու, ուսուցման, գործելակերպի և ծիսակատարությունների միջոցով:

2. Խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվում է՝ սույն իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենքներին համապատասխան»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

46. Դիմումատուն պնդում էր, որ բանակում ծառայելուց հրաժարվելու համար նրան դատապարտելով խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, ըստ որի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և միայնակ կամ այլ անձանց հետ համատեղ ու հրապարակավ կամ մասնավոր կարգով կրոնը կամ համոզմունքն արտահայտելու ազատությունը՝ դավանելու, ուսուցման, գործելակերպի և ծիսակատարությունների միջոցով:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքներն արտահայտելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության կամ բարքերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

Ա. Կողմերի փաստարկները

1. Կառավարությունը

47. Կառավարությունը պնդում էր, որ Կոնվենցիայով և Հայաստանի Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները, այդ թվում՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, պետք է հավասարապես և առանց խտրականության կիրառվեն բոլորի նկատմամբ: Դիմումատուն Հայաստանի քաղաքացի էր, ինչը նշանակում էր, որ նա, անկախ իր համոզմունքներից, ուներ բոլոր իրավունքներն ու ազատությունները և բոլոր պարտավորությունները՝ սահմանված Հայաստանի Սահմանադրությամբ և օրենքներով: Զինվորական ծառայությունը բոլոր քաղաքացիների՝ սահմանադրությամբ ամրագրված պարտավորությունն էր: Թեև «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսվում էին մի շարք բացառություններ նշված կանոնից, դրանք չէին ներառում Եհովայի վկա լինելու հանգամանքը: Ուստի, օրենքով չնախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելը կլիներ հավասարության և խտրականության բացառման սկզբունքի խախտում: Սահմանադրությամբ նախատեսված պարտավորության կատարումը չէր կարող համարվել դիմումատուի իրավունքների սահմանափակում, քանի որ բոլոր քաղաքացիները, անկախ իրենց կրոնական համոզմունքների, ունեին այդ պարտականությունները: *Valsamis v. Greece* գործում Հանձնաժողովը

համարել էր, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով չի ընձեռվում կարգապահական այնպիսի կանոններին չենթարկվելու իրավունք, որոնք կիրառվում էին համընդհանուր և չեզոք կերպով (1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996-VI, § 36): Ավելին, նշված հոդվածով խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց չէր վերապահվում զինվորական ծառայությունից կամ զինվորական ծառայության փոխարեն՝ քաղաքացիական ծառայությունից ազատվելու իրավունք, և այն Պայմանավորվող կողմերին չէր զրկում այդպիսի ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հնարավորությունից (տե՛ս *Heudens v. Belgium*, գանգատ թիվ 24630/94, Հանձնաժողովի՝ 1995 թվականի մայիսի 22-ի որոշում, չհրատարակված): Հիմնվելով այդ մոտեցման և *Peters v. the Netherlands* գործում տեղ գտած նմանատիպ եզրակացությունների վրա (գանգատ թիվ 22793/93, Հանձնաժողովի՝ 1994 թվականի նոյեմբերի 30-ի որոշում, չհրատարակված)՝ Կառավարությունը պնդում էր, որ դիմումատուի մտքի կամ խղճի ազատությունը չի սահմանափակվել: Ամփոփելով՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չէր ունեցել:

48. Կառավարությունը համաձայնվել էր, որ Կոնվենցիան «կենդանի գործիք» է, որը պետք է մեկնաբանվեր ներկա օրերի պայմանները հաշվի առնելով: Սակայն, այն հարցը, թե արդյոք Կոնվենցիայի այս կամ այն հոդվածը կիրառելի էր սույն գործով, պետք է դիտարկվեր Կոնվենցիայի այն մեկնաբանության տեսանկյունից, որը առկա էր այն ժամանակ, երբ տեղի էին ունեցել գործում նկարագրված իրադարձությունները: Դիմումատուն դատապարտվել էր 2001-2002 թվականներին, և այդ ժամանակ նրան դատապարտելը համապատասխանում էր միջազգային հանրության մոտեցմանը: Ավելին, ինչպես արդեն նշվել էր, Կոնվենցիայի համաձայն՝ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու համար դատապարտելը համարվում էր օրինական և հիմնավորված: Բացի դրանից, Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները ոչ մի կերպ չէին վերաբերում կրոնական, քաղաքական կամ ցանկացած այլ հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատմանը: Թեև վերը նշված *Heudens* և *Peters* գործերով վճիռներ կայացվել էին մոտավորապես տասը տարի առաջ, դրանք տվյալ հարցի վերաբերյալ կայացված ամենավերջին որոշումներն էին, և այդ ժամանակվանից ի վեր Դատարանը որևէ վճիռ չէր կայացրել, որով կհանգեր այլ եզրակացության: Բացի դրանից, Դատարանը նույնիսկ ավելի ուշ կայացրած իր վճիռներում չէր ընդունել, որ 9-րդ հոդվածը կիրառելի էր վիճարկվող հարաբերությունների պարագայում: *Thlimmenos v. Greece* գործում Դատարանն անհրաժեշտ չէր

համարել ուսումնասիրել այն հարցը, թե արդյոք դիմումատուին սկզբում դատապարտելը և հետագայում պետական մարմինների կողմից նրան հավաստագրված հաշվապահի պաշտոնում չնշանակելը հավասարազոր էր նրա իրավունքների սահմանափակման՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն: Դատարանը չէր անդրադարձել այն հարցին, թե արդյոք, անկախ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի ձևակերպումից, խղճի հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ նմանատիպ պատժամիջոցներ նշանակելը կարող էր ինքնին խախտել 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները ([ՄՊ], գանգատ թիվ 34369/97, § 43, ՄԻԵԴ 2000-IV): Դատարանը նույն մոտեցումն էր ցուցաբերել *Ülke v. Turkey* գործում (գանգատ թիվ 39437/98, §§ 53-54, 2006 թվականի հունվարի 24): Հիմնվելով նշված հանգամանքների վրա՝ Կառավարությունը պնդում էր, որ մինչ տվյալ պահը և հատկապես այն ժամանակ, երբ տեղի էին ունեցել գործում նկարագրված իրադարձությունները, խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու համար դատապարտելը չէր համարվում 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում, և հետևաբար Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, գործել են Կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով սույն հարցի վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքը՝ նրանք չէին կարող կանխատեսել Դատարանի կողմից 9-րդ հոդվածի նոր մեկնաբանություն տալու հնարավորությունը և, հետևաբար, չէին կարող իրենց գործողությունները համապատասխանեցնել այդ հնարավոր «նոր մոտեցմանը»: Վերջապես, այն հանգամանքը, որ Կոնվենցիան «կենդանի գործիք» է, չէր ենթադրում, որ այս դեպքում Դատարանը փոխելու էր իր մոտեցումը 9-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ:

49. Կառավարությունն այնուհետև նշել էր, որ այդ պահին Հայաստանում գործում էր 58 գրանցված կրոնական կազմակերպություն, այդ թվում՝ Եհովայի վկաները, կրոնական կազմակերպությունների ինը մասնաճյուղ և մեկ գործակալություն: Դրանց յուրաքանչյուրի համար օրենքով ապահովվել էին հավասար հնարավորություններ՝ ներառյալ հավասար իրավունքներն ու պարտավորությունները: Հետևաբար, եթե դրանցից յուրաքանչյուրը պնդեր, որ զինվորական ծառայությունը հակասում էր կազմակերպությունում ընդունված կրոնական համոզմունքներին, այնպիսի իրավիճակ կստեղծվեր, որ ոչ միայն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամները, այլև այլ կրոնական կազմակերպությունների անդամներ կկարողանային հրաժարվել իրենց հայրենիքը պաշտպանելու իրենց պարտավորությունը կատարելուց:

Ավելին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսվում էր պետության նկատմամբ ունեցած երեք տեսակի պարտավորություն, մասնավորապես՝ հայրենիքը պաշտպանելու, հարկերն ու տուրքերը վճարելու և օրենքները, այլոց իրավունքներն ու ազատությունները հարգելու պարտավորությունները: Հետևաբար, «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության կամ այլ կրոնական կազմակերպությունների անդամները կարող էին նույն հաջողությամբ պնդել, որ հարկեր ու տուրքեր վճարելը հակասում էր նրանց կրոնական համոզմունքներին, և պետությունը պարտավորված կլիներ չդատապարտել նրանց, քանի որ դա կարող էր համարվել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում: Նման մոտեցումն անընդունելի էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատը պետության նկատմամբ իր ունեցած պարտավորությունները կատարելուց խուսափելու համար կարող էր դառնալ այս կամ այն կրոնական կազմակերպության անդամ: Հիմնվելով վերոնշյալի վրա՝ Կառավարությունը պնդում էր, որ կրոնական համոզմունքները չէին կարող ծառայել քաղաքացու կողմից Սահմանադրությամբ նախատեսված պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց:

50. Ինչ վերաբերում էր Եվրոպայի խորհրդին անդամակցելիս Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին, ապա Կառավարությունը պնդում էր, որ 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել էր «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Այլընտրանքային ծառայություն նախատեսող այս օրենքի ընդունմամբ իշխանությունները ճանաչում էին կրոնական հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորությունը՝ միաժամանակ այդ հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց համար ապահովելով նրանց սահմանադրական պարտավորությունը կատարելու այլընտրանքային եղանակ: Ուստի, այդ պահին խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձինք դատապարտվում էին միայն այն դեպքում, երբ նրանք հրաժարվում էին նաև այլընտրանքային ծառայություն կատարելուց: Ինչ վերաբերում էր խղճի հիմքով ծառայությունից հրաժարված բոլոր ազատագրկման դատապարտված՝անձանց ներում շնորհելու պարտավորությանը, ապա Կառավարությունը պնդում էր, որ իշխանությունները կատարել էին նշված պարտավորությունը՝ ազատելով դիմումատուին նշանակված պատիժը կրելուց: Մասնավորապես, երկու տարի և վեց ամիս ժամկետով ազատագրկման դատապարտվելուց հետո դիմումատուն ազատվել էր Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումից վեց ամիս հետո:

2. Դիմումագրուն

51. Վկայակոչելով ԵԽԽՎ-ի թիվ 1518 հանձնարարականը՝ դիմումատուն պնդել էր, որ բանակում ծառայելուց հրաժարվելն իր մտքի և խղճի ազատության արտահայտում էր և նրան դատապարտելը հավասարազոր էր այդ ազատության սահմանափակման: Կառավարությունը, պնդելով իր դիտարկումներում, որ նման սահմանափակում տեղի չէր ունեցել, հիմնվում էր Հանձնաժողովի՝ տասը տարի առաջ կայացված որոշումների վրա՝ հաշվի չառնելով 9-րդ հոդվածի համաձայն՝ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքի աստիճանաբար ճանաչման փաստը, ինչպես նշված էր վերոնշյալ Հանձնարարականում, ինչպես նաև այն փաստը, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դա դարձել էր սովորության գործելակերպ: Ավելին, սույն իրավունքը հաստատվել էր նաև 2004 թվականի՝ «Եվրոպայի համար Սահմանադրության ընդունման մասին» պայմանագրում: Հիմնվելով «կենդանի գործիք» համարվելու մոտեցման վրա՝ դիմումատուն Դատարանից խնդրել էր վերանայել Հանձնաժողովի և դատարանի նախադեպային իրավունքը, ըստ որի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետը կարող էր գերակա լինել 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների նկատմամբ՝ հաշվի առնելով իրավունքի զարգացումը և տվյալ պահին ընդունված գործելակերպը անդամ պետություններում, որոնց մեծամասնությունը ճանաչել էր խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Այն փաստը, որ խղճի հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչումը տվյալ պահին պարտադիր կանոն էր, արտացոլվել էր Եվրոպայի խորհրդի քաղաքականության մեջ, ըստ որի նոր անդամ պետությունները պարտավորվում էին ճանաչել նշված իրավունքը՝ որպես կազմակերպությանը նրանց անդամակցության պայման, ինչը վերջերս տեղի էր ունեցել Հայաստանի Հանրապետության պարագայում:

52. Դիմումատուն այնուհետև պնդել էր, որ «կենդանի գործիք» համարվելու մոտեցման վերաբերյալ Կառավարության հիմնավորմամբ անտեսվում էր Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում տիրող իրավիճակը: Ավելին, Կառավարության նման հիմնավորմամբ Կոնվենցիայի մեկնաբանությունը հստակեցվում էր՝ ըստ դատարանի նախկին որոշումների՝ այդպիսով «սառեցնելով» Կոնվենցիայով սահմանված իրավունքները և խոչընդոտելով դրանց զարգացող մեկնաբանությունը: Հայաստանն այդ իրավունքն ընդունել էր նախքան Եվրոպայի խորհրդի անդամ դառնալը՝ 1996 թվականի հունվարի 26-ին ԵԽԽՎ-ում հատուկ

հյուրի կարգավիճակ ստանալուց հետո: ԵԽԽՎ-ի թիվ 221 կարծիքից (2000 թվական) նույնպես հետևում էր, որ Հայաստանի իշխանությունները քաջատեղյակ էին անդամ պետությունների կողմից խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքի համընդհանուր ճանաչման և խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց իրավունքների առնչությամբ Եվրոպայի խորհրդի կողմից նախկինում ընդունված տարբեր բանաձևերի մասին: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը վստահեցրել էր Նախարարների կոմիտեին, որ ամբողջությամբ պահպանելու էր նշված սկզբունքը՝ հանձն առնելով «ներում շնորհել խղճի հիմքով ծառայությունից հրաժարված բոլոր անձանց, որոնք դատապարտվել են ազատազրկման»: Դա համապատասխանում էր 2000 թվականին Եվրոպայի խորհրդում տիրող «ներկայիս» իրավիճակին: Ուստի, Կառավարության այն պնդումը, որ «նրանք չէին կարող կանխատեսել դատարանի կողմից 9-րդ հոդվածի նոր մեկնաբանություն տալու հնարավորությունը», մոլորեցնող էր: Ավելին, հարկեր վճարելուց հրաժարվելու վերաբերյալ Կառավարության փաստարկները չէին կարող կիրառվել սույն գործի դեպքում, քանի որ ի տարբերություն խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչմանը՝ կրոնական համոզմունքների պատճառով հարկեր չվճարելը չէր կարող համարվել տարածաշրջանային մակարդակով ընդունված փորձ, որը պարտադիր կանոն էր դարձել Եվրոպայի խորհրդի նոր անդամ պետությունների համար:

53. Դիմումատուն այնուհետև պնդում էր, որ կրոնի և համոզմունքի ազատության իր իրավունքի սահմանափակումը նախատեսված չէր օրենքով, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պարտավորությունների և միջազգային ու ներպետական իրավունքի այլ դրույթների համաձայն՝ նրան դատապարտելն անօրինական էր: Դա չէր հետապնդում իրավաչափ նպատակ, քանի որ 9-րդ հոդվածի 2-րդ մասով ազգային անվտանգության համար սահմանափակումներ չէին թույլատրվում: Ինչ վերաբերում է հասարակական անվտանգությանը և հասարակական կարգի պաշտպանությանը, ապա ոչ մի դատարան որևէ փորձ չէր կատարել՝ բացատրելու, թե ինչ առնչություն ունի նրա դատվածությունը նշված նպատակների իրագործման հետ: Վերջապես, հաշվի առնելով անդամ պետությունների մեծամասնության կողմից այդ պահին ընդունված սովորության փորձը՝ նույնիսկ այն քիչ անդամ պետություններում, որտեղ դեռևս չէր կիրառվել այլընտրանքային քաղաքացիական ծառայությունը, խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը չէր

կարող համարվել անհրաժեշտ միջոց ժողովրդավարական հասարակությունում: Հայաստանն ընդունել էր դա, երբ պարտավորվել էր զերծ մնալ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց ազատագրելուց՝ նույնիսկ նախքան համապատասխան օրենք ընդունելը՝ որպես Եվրոպայի խորհրդին անդամակցելու պայման: Ուստի, ազատությունից զրկելը քրեակատարողական հիմնարկում՝ իրենց պատիժը կրող դատապարտյալների հետ պահելու միջոցով ամբողջությամբ չէր համապատասխանում ժամանակակից ժողովրդավարական պետությանը:

54. Դիմումատուն, վերջապես, պնդում էր, որ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելը ուղղակի ազդեցություն չէր ունեցել սույն գործի վրա, քանի որ նշված օրենքն ընդունվել էր այն դեպքերից հետո, որոնց առնչությամբ ներկայացվել է գանգատ: Քննվող ժամանակահատվածում դիմումատուն չէր ունեցել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն իրականացնելու հնարավորություն և փոխարենն ազատագրվել էր: Ավելին, նշված օրենքով նախատեսվում էր այլընտրանքային ծառայություն, որն իրականացվում էր զինվորական հսկողության և վերահսկողության պայմաններում: Ուստի, եվրոպական չափանիշներին համապատասխան իրական այլընտրանքային քաղաքացիական ծառայության հնարավորություն Հայաստանում դեռևս չկար: Այդ հանգամանքը վերջերս հաստատվել էր ԵԽԽՎ-ի մոնիթորինգի հանձնաժողովի թիվ 1532 բանաձևով (2007 թվական) ու Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի վերաբերյալ 2006 թվականի հունիսի 30-ի իր երկրորդ զեկույցում: Նման այլընտրանքային ծառայությունն ընդունելի չէր խղճի հիմքով ծառայությունից հրաժարված անձանց համար, որոնք, ինչպես և դիմումատուն, Եհովայի վկաներ էին: Այդ պահին քրեակատարողական հիմնարկներում իրենց պատիժն էին կրում 64 այլ Եհովայի վկաներ, որոնք հրաժարվել էին նման ծառայություն կատարելուց: Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուն ազատվել էր իր պատիժը կրելուց, ապա հարկ է նշել, որ դիմումատուին ո՛չ ներում էր շնորհվել, ո՛չ էլ նա ազատվել էր զինվորական ծառայությունից: Ընդհակառակը, նա ազատագրված էր եղել տասն ամսվա և տասնյոթ օրվա ընթացքում՝ նախքան պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելը:

Բ. Դատարանի գնահատականը

1. Համապատասխան նախադեպային իրավունքի ամփոփումը

55. Դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին ամփոփել վիճարկվող հարցին վերաբերող՝ Կոնվենցիայի ներքո ձևավորված նախադեպային իրավունքը:

56. Սույն հարցի առնչությամբ Հանձնաժողովի ամենաառաջին որոշումներից մեկը կայացվել է *X v. Austria* գործով, որում Հանձնաժողովը նշել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը մեկնաբանելիս այն նաև հաշվի է առել 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետը, ըստ որի՝ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունն իր մեջ չի ներառում «զինվորական բնույթի ծառայություն կամ պարտադիր զինվորական ծառայությանը հավասարեցված այլ ծառայություն այն երկրներում, որտեղ ճանաչված է խղճի հիմքով զինծառայությունից հրաժարվելու դեպքերը»: Այս դրույթից ակնհայտ է դառնում, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետում «այն երկրներում, որտեղ նրանք ճանաչվում են» արտահայտությունն ընդգրկելով ընտրության իրավունքը տրվում է Բարձր պայմանավորվող կողմերին՝ որոշելու ճանաչել, թե ոչ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց, իսկ ճանաչելու դեպքում՝ նախատեսել այլընտրանքային ծառայության հնարավորություն: Այդ պատճառով Հանձնաժողովը եզրակացրել է, որ հաշվի առնելով 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետը, 9-րդ հոդվածով պետությունը չի պարտավորվում ճանաչել խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց և, հետևաբար, չի պարտավորվում հատուկ միջոցներ ձեռնարկել նրանց խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացման համար այնքանով, որքանով դա ազդեցություն է ունենում նրանց պարտադիր զինվորական ծառայության վրա: Հետևաբար, նշված հոդվածների համաձայն, խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց չճանաչող պետությունը չի զրկվում այն անձանց պատժելու հնարավորությունից, որոնք հրաժարվում են զինվորական ծառայությունից (գանգատ թիվ 5591/72, Հանձնաժողովի՝ 1973 թվականի ապրիլի 2-ի որոշում, Ժողովածու թիվ 43, էջ 161):

57. Հետագայում այս մոտեցումը հաստատվել է Հանձնաժողովի կողմից *X. v. Federal Republic of Germany* գործում, որը վերաբերում էր դիմումատուի կողմից խղճի հիմքով զինվորական ծառայության փոխարեն քաղաքացիական ծառայություն կատարելուց հրաժարվելուն (գանգատ թիվ 7705/76, Հանձնաժողովի՝ 1977 թվականի հուլիսի 5-ի որոշում, Որոշումներ և գեկույցներ (ՈՁ) 9, էջ 196): *Conscientious objectors v. Denmark* գործով Հանձնաժողովը կրկին նշել է, որ խղճի հիմքով ծառայությունից

հրաժարվելու իրավունքը ներառված չէ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների շարքում (գանգատ թիվ 7565/76, Հանձնաժողովի՝ 1977 թվականի մարտի 7-ի որոշում, ՈՁ 9, էջ 117): *A. v. Switzerland* գործում Հանձնաժողովը կրկին հաստատել է իր դիրքորոշումը և ավելացրել է, որ ո՛չ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար դիմումատուի նկատմամբ նշանակված պատիժը և ո՛չ էլ պատժից չազատելու հանգամանքը չեն կարող համարվել 9-րդ հոդվածի խախտում (գանգատ թիվ 10640/83, Հանձնաժողովի՝ 1984 թվականի մայիսի 9-ի որոշում, ՈՁ 38, էջ 219): Այն եզրահանգումը, որ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը Կոնվենցիայի որևէ հոդվածով չի երաշխավորում, հաստատվել է Հանձնաժողովի կողմից հետագա մի շարք գործերով կայացված վճիռներում (տե՛ս *համապարասխան փոփոխություններով, N. v. Sweden*, գանգատ թիվ 10410/83, Հանձնաժողովի՝ 1984 թվականի հոկտեմբերի 11-ի որոշում, ՈՁ 40, էջ 203, *Autio v. Finland*, գանգատ թիվ 17086/90, Հանձնաժողովի՝ 1991 թվականի դեկտեմբերի 6-ի որոշում, ՈՁ 72, էջ 245, վերոնշյալ *Peters Heudens* գործը):

58. Խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու համար դատապարտելու հարցը մի քանի անգամ ներկայացվել է նաև դատարան: *Thlimmenos v. Greece* գործում դիմումատուն պնդում էր, որ զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելու պատճառով անհնազանդություն ցուցաբերելու համար նրան դատապարտելու և հետագայում դրա պատճառով պետական մարմինների կողմից նրան հավաստագրված հաշվապահի պաշտոնում աշխատանքի չընդունելու հետևանքով խախտվել են Կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքները: Այդ դեպքում Դատարանն անհրաժեշտ չէր համարել ուսումնասիրելը այն հարցը, թե արդյոք սկզբում դիմումատուին դատապարտելը և հետագայում նրան հավաստագրված հաշվապահի պաշտոնում չնշանակելը համարվում էր նրա իրավունքների խախտում՝ 9-րդ հոդվածի համաձայն: Մասնավորապես, այն նշել էր, որ անհրաժեշտություն չկար անդրադառնալու այն հարցին, թե արդյոք, անկախ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի ձևակերպումից, խղճի հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ նմանատիպ պատժամիջոցներ նշանակելը կարող էր ինքնին խախտել 9-րդ հոդվածով երաշխավորված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (տե՛ս վերոնշյալ *Thlimmenos* գործը, §§ 43 և 53):

59. *Ülke v. Turkey* գործում, որը վերաբերում էր խղճի հիմքով զինվորական համազգեստ կրելուց պարբերաբար հրաժարվելու համար

դիմումատուին մի քանի անգամ անընդմեջ դատապարտելուն, Դատարանը կրկին անհրաժեշտ չէր համարել 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը քննելը (տե՛ս վերոնշյալ *Ülke* գործը, §§ 53-54): Փոխարենը՝ այդ գործը քննվել էր 3-րդ հոդվածի համաձայն, որը համարվել էր խախտված, քանի որ անձին մի քանի անգամ դատապարտելը հավասարազոր էր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, քանի որ դիմումատուին պատճառվել էր մեծ ցավ և տառապանք, որն ավելին էր քան քրեական պատժին կամ կալանավորմանը հատուկ նվաստացումը (նույնը, §§ 63-64):

60. Ամփոփելով՝ ինչպես մեկնաբանվել էր նախկին Հանձնաժողովի կողմից, Կոնվենցիայի 9-րդ հոդվածով չի երաշխավորում խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը:

2. Նշված սկզբունքների կիրառելիությունը սույն գործում

61. Դատարանը նշում է, որ դիմումատուն դատապարտվել էր պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու համար, քանի որ դա հակասում էր նրա՝ որպես Եհովայի վկայի կրոնական համոզմունքներին: Հիմնվելով «կենդանի գործիք» համարվելու մոտեցման վրա՝ դիմումատուն Դատարանից խնդրել էր վերանայել խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու և Կոնվենցիայի 9-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ նախադեպային իրավունքը:

62. Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիան «կենդանի գործիք» է, որը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով ներկայիս իրավիճակը (տե՛ս *Tyrer v. the United Kingdom* գործը, 1978 թվականի ապրիլի 25, § 31, «Ա» շարք, թիվ 26): Դրա դրույթներից մեկի համաձայն՝ որոշակի միջոցի ընդունելի լինելու հարցը քննելիս Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընդունված նորմերը հաշվի առնելը համարվում է օրինաչափ (տե՛ս *T. v. the United Kingdom* գործը [ՄՊ], գանգատ թիվ 24724/94, § 70, 1999 թվականի դեկտեմբերի 16):

63. Դատարանը չի ժխտում, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունն իսկապես ընդունել է խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայության տարբեր տեսակներ նախատեսող օրենքներ: Միևնույն ժամանակ, Դատարանը չի կարող անտեսել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետում ներառված դրույթները, որոնք արդեն իսկ ներկայացվել են (տե՛ս վերևում՝ §§ 56-57): Քանի որ սույն հոդվածով խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց ճանաչելու ընտրությունը

վերապահվում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի, Դատարանը կարծում է, որ այն հանգամանքը, որ Պայմանավորվող կողմերի մեծամասնությունը ճանաչել է նշված իրավունքը, չի կարող հիմք լինել՝ համարելու, որ այդ իրավունքը չճանաչած Պայմանավորվող կողմը խախտել է Կոնվենցիայով սահմանված իր պարտավորությունները: Հետևաբար տվյալ հարցի դեպքում այս գործոնը չի կարող համարվել օգտակար արդյունք Կոնվենցիայի զարգացող մեկնաբանության համար: Նման հանգամանքներում Դատարանը եզրակացնում է, որ, 9-րդ հոդվածը 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի լույսի ներքո, չի երաշխավորվում խղճի հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը:

64. Դատարանը նշում է, որ քննվող ժամանակահատվածում խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչված չէր Հայաստանում: Մյուս կողմից, Հայաստանը պաշտոնապես պարտավորվել էր արտաքին աշխարհի առջև օրենքով ճանաչել այդ իրավունքը, իսկ մինչև այդ իրավունքի ճանաչումը՝ ներում շնորհել խղճի հիմքով ծառայությունից հրաժարված բոլոր անձանց, ովքեր դատապարտվել են՝ փոխարենը նրանց հնարավորություն ընձեռելով այլընտրանքային ծառայության մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո այլընտրանքային քաղաքացիական ծառայություն կատարելու (տե՛ս § 43): Դատարանը չի կասկածում, որ դիմումատուն հրաժարվել էր պարտադիր զինվորական ծառայություն կատարելուց իրական կրոնական համոզմունքների հիմքով, և ընդունում է այն հանգամանքը, որ Հայաստանն իր հայտարարությամբ արտաքին աշխարհի առջև պաշտոնապես պարտավորվել էր ճանաչել այդ իրավունքը և պետք է դիմումատուի մոտ ազատագրկման ձևով պատիժ կրելու փոխարեն նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո այլընտրանքային ծառայություն կատարելու հնարավորություն ունենալու օրինական սպասելիքներ առաջացներ: Այդուհանդերձ, հաշվի առնելով 63-րդ պարբերության մեջ նշված իր եզրակացությունը, Դատարանը կարծում է, որ չի կարող համարվել, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները խախտել են Կոնվենցիայով սահմանված իրենց պարտավորությունները, երբ դիմումատուին դատապարտել են զինվորական ծառայություն կատարելուց հրաժարվելու համար:

65. Բացի դրանից, Դատարանը նշում է այն հանգամանքը, որ այլընտրանքային ծառայության մասին օրենքն արդեն ընդունվել է Հայաստանում և, հետևաբար, խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվում է: Սակայն Դատարանը համարում է, որ այդ օրենքի

էութիւնը և գործնականում դրա կիրառման եղանակը ենթակա չեն քննարկման սույն գանգատի շրջանակներում:

66. Այստեղից հետևում է, որ չի խախտվել Կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ

Վճռում է վեցը մեկի ծայների հարաբերակցությամբ, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2009 թվականի հոկտեմբերի 27-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Stanley Naismith
Քարտուղարի տեղակալ

Josep Casadevall
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համապատասխան՝ սույն վճռին կից ներկայացվում են հետևյալ առանձին կարծիքները՝

(ա) դատարանի մեծամասնության դիրքորոշմանը համընկնող՝ դատավոր Elisabet Fura-ի հատուկ կարծիքը.

(բ) դատարանի մեծամասնության դիրքորոշման հետ չհամընկնող՝ դատավոր Ann Power-ի հատուկ կարծիքը:

J.C.M.
S.H.N.

ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԸՆԿՆՈՂ՝ ԴԱՏԱՎՈՐ FURA-Ի ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

1. Թեև ես դատավորների մեծամասնության հետ քվեարկեցի, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի որևէ խախտում տեղի չի ունեցել, ես այդպես վարվեցի՝ ելնելով կարգից և Դատարանի նախադեպային իրավունքի նկատմամբ հարգանքից: Ես կցանկանայի ավելացնել հետևյալը.

2. Փոքր-ինչ զարմանալի է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքը ավելի զարգացած չէ: Գոյություն ունեցող նախադեպային իրավունքը, սակայն, հստակ է այն առումով, որ ընդհանրապես Կոնվենցիայով կամ մասնավորապես դրա 9-րդ հոդվածով չի նախատեսվում խղճի հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք: Ուստի, խղճի հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձի նկատմամբ ընդհանուր օրենքը կիրառելու դեպքում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերվում:

3. Պետությունը կարող է, սակայն պարտավոր չէ ճանաչել խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը, և միայն ճանաչելու դեպքում այն պետք է նախատեսի զինվորական ծառայության հետ կապ չունեցող ծառայության որևէ տեսակ՝ որպես այլընտրանք: Եվրոպայում վերջերս այս հարցերի վերաբերյալ ավելի ներդաշնակեցված մոտեցում է, թերևս, տարածում ստանում: Պետությունների մեծ մասում ճանաչում ստացած՝ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձինք իրավունք ունեն իրականացնելու այլընտրանքային ծառայություն: Որոշ պետություններում, սակայն, միայն կրոնական հիմքերն են ընդունվում, իսկ այլ պետություններում, թերևս, չկա այնպիսի իրավական համակարգ, որի շրջանակներում կճանաչվեին խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձինք: Երբեմն այլընտրանքային ծառայության համար կարող է ավելի երկար ժամկետ սահմանվել, քան զինվորական ծառայության համար:

4. Վերջերս Դատարանը պատրաստակամություն է ցուցաբերել անդրադառնալու խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու հարցին՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածից բացի այլ հոդվածներ դիտարկելով: *Thlimmenos v Greece* գործում (2000 թվական)

զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելու պատճառով դիմումատուի նախկին դատվածությունը չէր կարող արդարացնել նրան հավաստագրված հաշվապահի պաշտոնում չնշանակելը: Այդ դեպքում որոշվել էր, որ այն փաստը, որ պետությունը չէր տարանջատել նրա արարքն ավելի ծանր հանցանքներից, որոնցից այն զգալիորեն տարբերվում էր (44-րդ պարբերություն), նշանակում էր, որ 14-րդ հոդվածը, դիտարկելով 9-րդ հոդվածի հետ, խախտվել էր: Մյուս դեպքերում Դատարանն իր հիմնավորումներում առաջնորդվել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածով (արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք) և 5-րդ հոդվածով (անձին անօրինական կերպով կալանավորելը). տե՛ս համապատասխանաբար *Ülke v Turkey* (2006 թվական) ու *Tsirlis and Kouloumpas v Greece* (1997 թվական) գործերը:

5. Մինչ այժմ Դատարանը չի համարել, որ զինվորական ծառայություն կատարելու պարտավորությունը խախտում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, սակայն այն, թերևս, պատրաստ է եղել քննել խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ նշանակվող պատիժների համաչափության հարցը և վճռել, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում, եթե դրանք չափից ավելի խիստ են եղել, ինչպես տեղի էր ունեցել *Thlimmenos* գործում, երբ խղճի հիմքով ծառայությունից հրաժարված անձն ազատագրկման ձևով պատիժ էր կրել և չէր նշանակվել հավաստագրված հաշվապահի պաշտոնում:

6. Քննվող գործի առնչությամբ իմ նախնական եզրահանգումն այն էր, որ անհրաժեշտ է հետ կանգնել և թույլ տալ Մեծ պալատին կրկին դիտարկել այս հարցը /վերանայել նախադեպային իրավունքը/ և մի գուցե մեկ քայլ առաջ գնալ ու նշել, որ խղճի հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձին դատապարտելը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում է: Ներկա օրերի պայմանները հնարավոր է, որ փոխված լինեն, և արդյունքում հնարավոր լինի հանգել նման եզրակացության՝ համենայն դեպս այն դեպքում, երբ պատիժը ներառում է ազատագրկում:

7. Որպես այլընտրանք՝ ես կնախընտրեի վերաորակավորել բողոքը և այն քննել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, քանի որ դիմումատուն ազատագրկվել էր այն դեպքում, երբ Հայաստանը հստակ (և գուցե նույնիսկ պարտադիր իրավական ուժ ունեցող) պարտավորություն էր ստանձնել (տե՛ս վճռի § 43), և

ԲԱՅԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՃԻՌ – ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔ

դա կարող էր հավասարազոր լինել արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի՝ ելնելով *Ülke v Turkey* գործից և *Nuclear Test գործից*, որի վերաբերյալ որոշում էր կայացրել Արդարադատության միջազգային դատարանը (*Nuclear Tests (Australia v. France)*, ԱՄԴ-ի վճիռ, 1974 թվականի զեկույցներ, էջ 253, §§ 42-60):

ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ՝ ԴԱՏԱՎՈՐ POWER-Ի ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

1. Քննարկելով Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար ներկայացված դիմումը՝ 2000 թվականի մայիսին պատասխանող պետությունը հանդես էր եկել միակողմանի հայտարարությամբ, ըստ որի այն պարտավորվում էր անդամակցությունից հետո երեք տարվա ընթացքում ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք՝ Եվրոպական չափանիշներին համապատասխան, և մինչև համապատասխան օրենքի ընդունումը ներել խղճի հիմքով ծառայությունից հրաժարված բոլոր այն անձանց, որոնք դատապարտվել են ազատազրկման՝ հնարավորություն տալով նրանց փոխարենը կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Այդ պետության կողմից Կոնվենցիայի վավերացումից հետո, ինչպես նաև համապատասխան հայտարարությունից ավելի քան երկու տարի հետո դիմումատուն դատապարտվել էր զգալի ժամկետով ազատազրկման, քանի որ հրաժարվել էր պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուց: Զինվորական ծառայությունից նա հրաժարվել է իրական կրոնական համոզմունքների պատճառով՝ մի հանգամանք, որը չի վիճարկվում: Նա միշտ էլ պատրաստակամ է եղել կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

2. Չհայտնաբերելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում, մեծամասնությունը, իմ կարծիքով, բավարար ուշադրություն չի դարձրել երկու կարևոր սկզբունքներին, ըստ որոնց Կոնվենցիան «կենդանի գործիք» է, որի դրույթները պետք է մեկնաբանել ներկայիս իրավական չափանիշներին և նորմերին համապատասխան և, չնայած այն հանգամանքի, որ օրենքով թույլատրվում է սահմանափակել Կոնվենցիայով սահմանված իրավունքը, Դատարանը պահպանում է ձեռնարկված ցանկացած միջոցի համաչափությունը գնահատելու հարցում իր վերահսկողական դերը:

(i) Կոնվենցիան «կենդանի գործիք» է:

3. Պարտադիր զինվորական ծառայությունը, *per se*, չի արգելվում Կոնվենցիայով, սակայն Դատարանը բազմիցս շեշտել է, որ այս պայմանագիրը «կենդանի գործիք» է, և որ դրա դրույթները պետք է դինամիկ ու զարգացող կիրառություն ունենան, որպեսզի հնարավոր լինի իրագործել պայմանագրի խնդիրներն ու նպատակը: Այլ կերպ ասած, դրա նորմերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ հաշվի առնելով ներկա օրերի պայմանները:¹ Իրավամբ, Դատարանն ընդունել է, որ իր որոշումները պետք է վերանայվեն,² և որ վճիռ կայացնելիս այն չի կարող զերծ մնալ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում տեղի ունեցող զարգացումների և համընդհանուր կերպով ընդունված նորմերի ու քաղաքականության ազդեցությունից:³

4. Քանի որ Դատարանը համարում է, որ պարտավոր է առաջնորդվել նախկին Հանձնաժողովի նախադեպային իրավունքով, մեծամասնության եզրակացությունը, ըստ իս, չի արտացոլում ժողովրդավարական հասարակություններում գրեթե համընդհանուր ճանաչում ստացած հետևյալ մոտեցումը, ըստ որի «*խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հիմնարար տարր է*»:⁴ Այս մոտեցումը շեշտվել է Եվրոպայի խորհրդի (դեռևս 1987 թվականին), Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի և Եվրոպական պառլամենտի կողմից:⁵ Իրավամբ, 2000 թվականին պատասխանող պետությունն իր իսկ հայտարարությամբ

¹ *Tyrer v. United Kingdom* (1978) 2 EHRR 1 § 31.

² *Rees v. United Kingdom* (1986) 9 EHRR § 56; see also the subsequent cases of *Cossey v. United Kingdom* (1990) 13 EHRR § 622; *Sheffield and Horsham v. United Kingdom* (1998) 27 EHRR § 163; and *Goodwin v. United Kingdom* [GC], no. 28957/95, ECHR 2002-VI.

³ *Tyrer*, § 31.

⁴ ԵԽԽՎ-ի թիվ 1518 հանձնարարական (2001 թվական), § 44.

⁵ Տե՛ս, *inter alia*, 1987 թվականի ապրիլի 9-ին Նախարարների կոմիտեի կողմից ընդունված թիվ R (87) 8 հանձնարարականը, ԵԽԽՎ-ի թիվ 1518 հանձնարարականը (2001 թվական), 2006 թվականի փետրվարի 27-ի Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով բարձրագույն հանձնակատարի զեկույցը եւ Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիան (2000 թվական):

հաստատել էր, որ ընդունում էր այս ոլորտում նույնիսկ այն ժամանակ գործող և ընդունված Եվրոպական իրավական նորմերը, սակայն դիմումատուին դատապարտելու և ազատազրկելու հետ կապված պետության հետագա գործողությունները հակասում էին այն հանգամանքին, որ այն ճանաչել էր նշված նորմերը և պարտավորվել էր դրանք գործնականում կիրառել:⁶ Որդեգրելով Կոնվենցիայի մեկնաբանման և կիրառման հարցում Դատարանի ընդհանուր մոտեցումը՝ հաշվի առնելով գործող իրավական նորմերն ու չափանիշները, ես չեմ կարող չեզրակացնել, որ այս գործում խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

5. Յանկացած դեպքում պարզ է, որ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքի վերաբերյալ դատարանի դիրքորոշումը կարելի է տարբերակել նախկին Հանձնաժողովի կողմից ընդունված մոտեցումից: Ակնհայտ է, որ դատարանն այս հարցը դիտարկում է որպես մի հարց, որն առնչվում է մարդու իրավունքների հետ կապված կարևոր խնդիրների: *Thlimmenos v. Greece* գործում Մեծ պալատը նշել էր, որ ի տարբերություն այլ հանցանքների, կրոնական կամ փիլիսոփայական հիմքերով զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելու համար դատապարտելը չի կարող նշանակել, որ անձն անազնիվ և անբարոյական վարքագիծ է դրսևորել, և որ այս առնչությամբ դիմումատուի նախկին դատվածության՝ շարունակական

⁶ Չնայած Հայաստանի Հանրապետությունն ստանձնել էր Եվրոպական չափանիշներին համապատասխան այլընտրանքային ծառայության մասին օրենք ընդունելու պարտավորությունը՝ 2007 թվականին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հիասթափությամբ նշել էր, որ գործող օրենքով խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց համար չի ապահովվում «հստակորեն քաղաքացիական բնույթի այնպիսի իրական այլընտրանքային ծառայության հնարավորություն, որը բնույթով չպետք է լինի զսպման կամ պարժի միջոց»՝ համաձայն Եվրոպայի խորհրդի չափանիշների: Վեհաժողովը «խորապես մտահոգված էր այն հանգամանքով, որ իրական քաղաքացիական ծառայության հնարավորության բացակայության պարճառով խղճի հիմքով ծառայությունից հրաժարված փասնյակ անձինք, մեծամասամբ Եհովայի վկաներ, շարունակում են ազատազրկված մնալ, քանի որ նախընտրում են քրեակարարողական հիմնարկում գտնվել իրական քաղաքացիական բնույթ չունեցող այլընտրանքային ծառայություն կատարելու փոխարեն»: (ԵԽԽՎ-ի մոնիտորինգի հանձնաժողովի թիվ 1532 բանաձեւ (2007 թվական)):

անբարենպաստ հետևանքները (համապատասխան պաշտոնի նշանակվելու արգելք) բավարար էին, որպեսզի համարվեր, որ տեղի էր ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 9-րդ հոդվածի հետ դիտարկելիս:⁷ *Stefanov v. Bulgaria* գործում Դատարանը համաձայնեց գործը կարճել, երբ համոզվեց, որ կողմերի համաձայնությունը հիմնված էր Կոնվենցիայով սահմանված՝ «մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքի վրա»:⁸ Դատարանի որոշման մեջ մանրամասն նկարագրված էին այն համաձայնության պայմանները, որով նախատեսվում էին զինվորական ծառայությունից հրաժարվելու հիմքով դիմումատուի (և այլ անձանց) դեմ հարուցված քրեական գործով վարույթի կարճում, նշանակված բոլոր պատիժների վերացում, պատասխանող պետության կողմից նման դեպքերում համաներում և որպես զինվորական ծառայությանը այլընտրանք՝ բացառապես քաղաքացիական ծառայություն նախատեսող օրենսդրություն ներդնելու համար միջոցների ձեռնարկում, և, վերջապես, դիմումատուի ծախսերի փոխհատուցում: Վեց տարի անց *Ülke v. Turkey* գործում Դատարանը եզրակացրել էր, որ խաղաղության կողմնակցին մի քանի անգամ ազատագրվելը զինվորական ծառայությունից հրաժարվելու համար Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում էր: Այն համարել էր, որ ներպետական օրենսդրությամբ համապատասխան դրույթներ չէին նախատեսվում խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց համար, ինչպես նաև չէին ապահովվում անձի համոզմունքների հիմքով զինվորական ծառայություն կատարելուց հրաժարվելու դեպքերը կարգավորելու համապատասխան միջոցներ⁹: Հաշվի առնելով նշվածը՝ մեծամասնության եզրակացությունը, թերևս, ոչ միայն համահունչ չէ խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու հարցում ներկայիս եվրոպական չափանիշների հետ, այլև այն չի համընկնում նաև հենց Դատարանի դիրքորոշման հետ՝ դատական պրակտիկայի ընդհանուր ուղղության առումով, որի մասին վկայում է նախադեպային իրավունքը:

⁷ [GC], no. 34369/97, ECHR 2000-IV

⁸ Գանգատ թիվ 32438/96, ընդունելիության վերաբերյալ 2000 թվականի ապրիլի 6-ի որոշում:

⁹ *Ülke v. Turkey*, no. 39437/98, 24 January 2006, at § 61 and 62.

(ii) Միջամտության համաչափությունը

6. Ես ընդունում եմ, որ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետով ոչ ճանաչվում և ոչ էլ բացառվում է խղճի հիմքով ծառայությունից հրաժարվելու իրավունքը, սակայն դա չի նշանակում, որ այն պետությունը, որը չի ճանաչում նշված իրավունքը, այդպիսով ձեռք է բերում գործողությունների ազատություն խղճի հիմքով ծառայությունից հրաժարվող անձանց դեպքերը կարգավորելու հարցում: Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նյութական իրավունքները շարունակում են գոյություն ունենալ, և կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատության ցանկացած թույլատրված մ պարագայում պետք է ապացուցվի, որ այն անհրաժեշտ է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հանրային շահերի պաշտպանության համար (դրանցից ոչ մեկը, ընդ որում, չի ներառում ազգային անվտանգությունը):

7. Դատարանը հետևողականորեն վճռել է, որ այն հայեցողական իրավունքը, որն ընձեռված է պետություններին սահմանափակման անհրաժեշտությունը և աստիճանը որոշելիս, փոխկապակցված է եվրոպական վերահսկողության հետ, որն ընդգրկում է թե՛ օրենսդրությունը և թե՛ այն կիրառող որոշումները¹⁰: Վերահսկողություն իրականացնելիս, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ազգային մակարդակում ձեռնարկված միջոցները, ըստ էության, հիմնավորված են և համաչափ են,¹¹ և այն պետք է ուսումնասիրի վիճարկվող դատական որոշումները՝ հաշվի առնելով ընդհանուր առմամբ գործի նյութերը¹²: Այս դեպքում պատասխանող պետությունը ոչ մի հիմնավորում չի ներկայացրել այն մասին, թե ինչ «ճնշող հանրային պահանջ» է

¹⁰ *Groppera Radio AG and Others v. Switzerland*, 1990 թվականի մարտի 28, «Ա» շարք, գանգատ թիվ 173, *Markt Intern Verlag GmbH and Klaus Beermann v. Germany*, 1989 թվականի նոյեմբերի 20, «Ա» շարք, գանգատ թիվ 165 եւ *Kokkinakis v. Greece* 1993 թվականի մայիսի 25, § 47, «Ա» շարք, գանգատ թիվ 260-Ա:

¹¹ *Groppera Radio AG and Others v. Switzerland*, § 72, տե՛ս նաեւ *Barfod v. Denmark*, 1989 թվականի փետրվարի 22, «Ա» շարք, գանգատ թիվ 149:

¹² *Kokkinakis v. Greece*, 1993 թվականի մայիսի 25, § 47, «Ա» շարք, գանգատ թիվ 260-Ա:

գոյություն ունեցել (եթե գոյություն ունեցել է), որն անհրաժեշտ է դարձրել դիմումատուի ազատագրկումը այս գործի կոնկրետ հանգամանքներում¹³: Անհրաժեշտության առկայությունն ապացուցելու պարտականությունը դրված էր պետության վրա, առավել ևս այն հանգամանքներում, երբ այն արդեն հաստատել էր, որ ճանաչում է և պարտավորվում է պահպանել այս ոլորտում եվրոպական ներկայիս չափանիշները: Այն չի ապացուցել, որ դիմումատուի ազատագրկումն անհրաժեշտ էր՝ այդպիսով չբավարարելով համաչափության պահանջը, և, հետևաբար, այդ հանգամանքով հաստատվում է իմ այն կարծիքը, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում: Քանի որ մեծամասնությունը չի իրականացրել այս դատարանին վերապահված վերահսկողական գործառույթը, դրա մոտեցումը, ըստ իս, համահունչ չէ դատարանի այն գործելակերպի հետ, որը վերաբերում է Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքը պետության կողմից սահմանափակելու անհրաժեշտությունը մեկնաբանելուն:

¹³ Տե՛ս *Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova*, գանգատ թիվ 45701/99, §125, ՄԻԵԿ, 2001-XII, որում դատարանը վճռել էր, որ ազգային անվտանգությանն սպառնացող վտանգի վերաբերյալ պնդումը պետությանը չի ազատում նման պնդումը հիմնավորելու պարտավորությունից: